

կեանք՝ հերքն, ցուցակ՝ աշքն, լարիչ՝  
միտքն, չափ ժամանակին՝ կեանքն, դա-  
դարութիւն՝ մահ, քայլքայութիւն զիակն, եղ-  
ծութիւն գերեզմանն, շարժութիւն վերացեալ՝  
հոգին, և տեղութիւն նորա... օր մի ան-  
հաստատ ըստ կլիմայից՝ ուրեց կարճ և  
ուրեց փոքր մի երկար:

\*

Օրհամ՝ երկունց, մահ՝ ծնունդ յաւի-  
տենականութեան:

\*

Այմենընկալ բաժակ է կրից սիրտ, է որ  
առանձինն հեղանի և է որ միահազոյն. է  
որ իջեալ ի խորս անշարժ կայ, և է որ  
փրփրացեալ ի վեր ցայտէ. այլ յոլովք  
ի յատակս և յերեսս նորա թողուն զդիրտ:

\*

Սէր՝ հաճութիւն էութեան անձին, որ-  
պէս և յիստուած:

\*

Այմենայն բոյսը ընծիւղին յանդաստանս  
սրտից, զոր կամիս խլես և զոր կամիս  
ոչ:

\*

Բազում անգամ յանտեսութեան աշաց  
հզորատես լինին միտք, որպէս ի չոմեր,  
յիսիան, ի Մ'իտովն, ի Փողիւրվ, ի Վ'իր-  
գիւ աշակաթ, ի Տըլիւ ևն:

\*

Լերինց գլուխը են երկրի յորս իջանէ  
ցող օրհնութեան երկնից և անտի ծաւալի  
յընդհանուր մասունս:

\*

Զի՞նչ քան զաշխատութիւն ծանր, և  
զի՞նչ քան զհանգիստ քաղցր. այլ սա  
չկարէ բայց զհետ գալ զառաջնոյն:

\*

Մկանունց ալեաց յարեւն լուսոյ ար-  
ծաթափայլց, իրուն զրահաւոր զօրականց  
կուռ զհետ միմիանց ի չու:

\*

Անձուկ են մուտք գերեզմանին, և հա-  
նեն ի լայնարձակ ճանապարհն յաւիտե-  
նից:

\*

Ժամանակ ծախիւեալ յօգուռ կարճ է այլ  
պտղաւէտ, ժամանակ վայրապար՝ երկար  
է այլ անպտղուղ:

\*

Զի՞նչ էի. զի՞նչ եղէ. զի՞նչ եմ. զի՞նչ  
կարէի լինել. զի՞նչ կարեմ լինել. զի՞նչ  
լինելոց եմ:

\*

Ե'8 Յուլիսի ի պահու իսաւարման արեւու.

1842

Արեգակնդ, անդրանիկ երկնից. առ քեզ  
ակնարկն ըիւր աշկունը լուսաւորեալը  
առ ի քիչն և նսեմացեալը ի խաւարելն  
ցու. յորժամ վարդագոյն վառեալ յառնես  
ընդ արշալուրշ, յորժամ իշխանական  
փառօց յայտնիս ի միջորէի, ոչ ոք հայի  
ընդ քեզ, բանզի յուանն ի քեզ, իսկ  
այժմ թաղծեալ տրտմին... Ահա խաւար,  
ահա զիշեր... արես, արե, ահ, մի՛ փախ-  
չիր, թումիմ ընդ քեզ զաշացս լոյս կո-  
րուսանել... ահա լուսին դաւաճանեալ  
արկ զըն զքոզ իւր... աստեղը ընդէ՛ր  
յամենն եթէ զիշեր է... Ահ, այսպէս ի  
խաւարել արեւու կենաց՝ աշը որ այժմ  
չհային ընդ իս՝ դարձցին ընդ իս դարձ-  
ցին միանգամմ... Այլ ստուեր լուսոյն  
զաշացեալ ի քիչն ի բաց կայ... և իրրե  
զնրագ վասիս դու ի կուսէ... և տակաւ  
աճէ լոյս բո... Մահացուց անդրէն զաշս  
ի բաց դարձուցանեն... այլ իմ արեւու  
խաւարելց ոչ առաջինն դարձցի լոյս,  
այլ լոյս սկզբնական, լոյս երեսաց Աս-  
տուծոյ. և եղչց ես արեգակն զերծ ի  
մթարից յաւիտեան...:

Հ. Դ. Աւետան

Յարայարելի

Ոչ ոք շատ կը սորգի՛ եթէ շատ չի մուածէ.  
յարատն մտածելը՝ միակ և հասարակ ճանա-  
պարն է՝ զիսութեան (Խօսմինի)

Գիտութիւնը յիմարութիւն է՝ եթէ ողջմուռ-  
թիւնը զայն չի կառավարէ:

Մարդուն համար իւր սեպհական կամքէն ա-  
ւելի բռնակալ չի կայ: